Հաստատված է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
«_31_ »__08__ 2022 թ.-ի նիստում (արձ. թիվ 1):
Ամբիոնի պետ, ոստ. գնդապետ
Ա. Հովհաննիսյան .....
(ստորագրություն)
.....
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթի կարճման հիմնահարցերը **(մագիստրատուրայի հեռակա ուսուցում)**
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քրեական դատավարության ամբիոն E-mail: qrdatambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Հովհաննիսյան (ի. գ. թ., դոցենտ) E-mail: qrdatambion@mail.ru Հեռ.՝ +374 93000762
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		1-ին կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		մագիստրոս

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**1 (մեկ)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթի կարճման հիմնահարցերը» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 30 ժամ, որից 10 ժամ՝ դասախոսություն, 20 ժամ՝ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը ուսումնասիրում է մասնագիտական գրականություն, կատարում մշակումներ, դասախոսի հանձնարարությամբ պատրաստում գիտական զեկույցներ ու հոդվածներ, ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է դիֆերենցված ստուգարքի անցկացմամբ:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական դատավարության իրավունք», բակալավրիական դասընթացի և «Մինչդատական վարույթի

		հիմնահարցերը քրեական դատավարությունում» մագիստրոսական դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթի կարճման հիմնահարցերը» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդման ժամկետների կասեցման և քրեական վարույթի կարճման ինստիտուտների էությունը, վեր են հանվում դրանց տեսական և գործնական հիմնախնդիրները՝ հիմք ընդունելով ինչպես ՀՀ և արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենսդրությունը, քննչական պրակտիկան, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները
ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ		Դասընթացի նպատակն է սովորողներին մատուցել համապարփակ գի-տելիքներ քրեական վարույթի կասեցման և կարճման վերաբերյալ: Դասընթացի ուսումնասիրումը խնդիր ունի վերհանել. 1. հանրային քրեական հետապնդման ժամկետների կասեցման և քրեական վարույթի կարճման ինստիտուտների ծագման և զարգացման, 2. հանրային քրեական հետապնդման ժամկետների կասեցման և քրեական վարույթի կարճման հասկացությունների վերաբերյալ տեսական մոտեցումների, 3. քրեական հետապնդման կասեցման պայմանների կիրառման ու մեկնաբանման հիմնահարցերի, 4. քրեական հետապնդման կասեցման և կարճման առանձին հիմքերից հրաժարվելու՝ քրեադատավարական նոր օրենքի մոտեցումների, 5. հանրային քրեական հետապնդման ժամկետների կասեցման և քրեական վարույթի կարճման դատավարական կարգի հիմնախնդիրների, 6. հանրային քրեական հետապնդման ժամկետների կասեցման և քրեական վարույթի կարճման օրինականության և հիմնավորվածության ապահովման հիմնահարցերի վերաբերյալ տեսական հայացքները, այդ հիմնահարցերի լուծման ուղիները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***1. Կարողանա՝***		1) ամփոփել քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթի կարճման ինստիտուտների ծագման և զարգացման օրինաչափություններն ու պատմական ընթացքը, 2) սահմանել քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթի կարճման հասկացությունները, թվարկել դրանց վերաբերյալ դոկտրինալ մոտեցումները, բացահայտել քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթի կարճման հասկացությունների բովանդակությունը, 3) բացատրել քրեական հետապնդման կասեցման ինստիտուտի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված մոդելը, 4) բացատրել քրեական հետապնդման կասեցման պայմանների կիրառման ու մեկնաբանման հիմնահարցերը և դրանց լուծումներ առաջարկել, 5) բացատրել ու մեկնաբանել քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթի կարճման առանձին հիմքերից հրաժարվելու՝

		քրեական դատավարության նոր օրենսգրքի մոտեցումները, 6) բացատրել քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթի կարճման դատավարական կարգի հիմնախնդիրները և դրանց լուծումներ առաջարկել, 7) բացատրել քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթի կարճման օրինականության և հիմնավորվածության ապահովման հիմնահարցերը և դրանց լուծումներ առաջարկել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		<u>Նորմատիվ իրավական ակտեր.</u> 1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թ. խմբ.): 2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, (1948 թ.): 3. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1950 թ.): 4. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թ.): 5. Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիա (1985 թ.): 6. Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիա (2002 թ.): 7. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք 8. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք 9. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք 10. «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք 11. «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք 12. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» 13. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք 14. «Դատախազության մասին» ՀՀ օրենք 15. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք 16.«Փաստաբանության մասին» ՀՀ օրենք 17.«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 18. «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենք 19. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք 20. «Փոստային կապի մասին» ՀՀ օրենք 21. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումներ 22. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ:

		Տեսական աղբյուրներ 1. *Бердичевский Ф.Ю., Якубович Н.А.* Приостановление предварительного следствия //Под. общ. ред. Афанесьева В. С., М., 1974: 2. *Бордиловский Э.И., Галустьян О.А*. Приостановление, возобновление, прекращение уголовного дела и окончание предварительного следствия с обвинительным заключением. М., 2004: 3. *Быков В.М., Ломовский В.Д.* Приостановление производства по уголовному делу. М., Юридическая литература, 1978: 4. *Василеьева Е.Г.* Правовые и теоретические проблемы прекращения уголовного преследования и производства по уголовному делу. – М: Изд. «Юрлитинформ», 2006: 5. *Власова Н.А.* Досудебное производство в уголовном процессе. – М., ЮРМИС, 2000: 6. *Гранкин К.Б., Черкасова Е.К.* Приостановление производства по уголовному делу. Учебное пособие, Тюмень, изд-во Тюмен. юрид. ин-та МВД РФ, 2001: 7. *Жогин Н.В., Фаткуллин Ф.Н.* Предварительное следствие в советском уголовном процессе. М., Юридическая литература, 1965: 8. *Клюкова М.Е., Малков В.П.* Приостановление дела по уголовно-процессуальному законодательству. Казань, Казанский университет, 1993: 9. *Попов А.М.* Приостановление и возобновление предварительного следствия: методические рекомендации, Тамбов, изд.-во Тамб. гос. тех. ин-та, 2005: 10. *Химичева Г.П., Патов Н.А.* Приостановление предварительного следствия. Процессуальные и организационные вопросы, М., ЮИ МВД РФ, 1996.
Լրացուցիչ		**Գիտական հոդվածներ** 11. Ավագյան Վ. Քրեական վարույթի կարճման առանձնահատկությունները //Օրինականություն, 2010, № 64, 19-25 էջեր: 12. Վարդանյան Ա. Դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը քրեական գործը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու օրինականության և

հիմնավորվածության նկատմամբ //Պետություն և իրավունք, Երևան, 2007, թիվ 4(38) 59-60 էջեր:

13. *Ефимичев С., Ефимичев П.* Некоторые вопросы приостановления предварительного расследования // Уголовное право, 2005, № 3, 77-79 էջեր:

14. *Исаенко В.Н.* Проверка прокурором законности и обоснованности приостановления предварительного следствия //Вестник Академии Генеральной прокуратуры Российской Федерации. - М., 2009, № 6(14), 35-38 էջեր:

15. *Куссмауль Р.* Всякое прекращение уголовного дела – реабилитирует // Российская юстиция. 2000, № 9.

16. *Ломовский В.Д.* Вопросы приостановления производства по уголовному делу в советском уголовном процессе // Правоведение, 1970, № 6, 115-118 էջեր:

17. *Лукашевич В., Шимановский В.* Меры пресечения при приостановления уголовного дела //Рос. юстиция, 1994, № 7, 19-21 էջեր:

18. *Нечаев А.А.* Становление и развитее института приостановления предварительного расследования в российском уголовно-процессуальном законодательстве //«Черные дыры», 2007, № 5, 370-371 էջեր:

19. *Сергеев Б.М.* Отсутствие события и состава преступления как основания к отказу в возбуждении уголовного дела // Следователь. 2002. № 10. 6-7 էջեր:

20. *Скоморохов О.Н.* Проблемные аспекты приостановления уголовных дел //«Черные дыры», 2007, № 5, 271-272 էջեր:

21. *Солодовник В.В.* О некоторых уголовно-процессуальных проблемах института приостановления предварительного следствия //Вестник Санкт-Петербургского университета МВД России, 2010, № 3(47), 91-96 էջեր:

Ատենախոսություններ և սեղմագրեր

22. Закирова Э.Ф. Приостановление предварительного следствия в случае, когда подозреваемый или обвиняемый скрылся от следствия либо место его нахождения не установлено по иным причинам. дис. ... канд.

юрид. наук, Ижевск, 2004.

23. Кочетова А.В. Актуальные вопросы института приостановления производства по уголовному делу. Дис. ... канд. юрид. наук, Челябинск, 2006.

24. Нечаев А.А. Приостановление предварительного расследования в уголовном процессе России. Дис. ... канд. юрид. наук. – М., 2007.

25. Попов А.М. Проблемы совершенствования оснований и условий приостановления предварительного следствия. Дис. ... канд. юрид. наук, Саратов, 2004.

26. Рябчиков В.В. Приостановление и возобновление предварительного расследования. Дис. ... канд. юрид. наук. – Владимир, 2006.

27. Черкасова Е.К. Правовое регулирование приостановления и возобновления предварительного расследования. Омск, 2004.

28. Վարդանյան Ա.Ժ. Քրեական գործով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման օրինականության և հիմնավորվածության ապահովումը նախնական քննության փուլում: Իրավ. գիտ. թեկն. ատենախոս. սեղմագիր, Երևան, 2009:

29. Մարտիրոսյան Ա. Քրեական գործով վարույթի կասեցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում. Իրավ. գիտ. թեկն. ատենախոս. սեղմագիր, Երևան, 2011.

30. Белоусова Е.А. Прекращение уголовного преследования в стадии предварительного расследования. Автореф. дисс. …канд. юрид. наук, СПб, 2004

31. Сафранов Д.М. Обстоятельства, исключающие уголовное преследование. Автореф. дисс. …канд. юрид. наук, Омск, 2004, 24 էջ:

32. Сергеев К.А. Приостановление предварительного расследования. Автореф. дис. канд. юрид. наук, Екатеринбург, 2002.

33. Солодовник В.В. Уголовно-процессуальные проблемы института приостановления предварительного следствия. Санкт- Петербург, 2011.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ	Բաղադրիչ 1 – 100 % (դիֆստուգարք)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	

Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
18-20	Գերազանց
13-17	Լավ
8-12	Բավարար
0-7	Անբավարար
0	Չներկայացած

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Ուսանողի առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ընթացիկ առաջադիմության հիման վրա՝ դիֆստուգարքի արդյունքում: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Ներկայություն	Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:

Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն աշխատանք		Ինքնուրույն աշխատանքն անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 Քրեական հետապնդման կասեցումը՝ որպես դատավարական ինստիտուտ: Քրեական հետապնդման կասեցման հիմքերը և պայմանները **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական հետապնդման կասեցման ինստիտուտի պատմական ծագումն ու զարգացումը 2. Քրեական հետապնդման կասեցման հասկացությունը և նշանակությունը 3. Քրեական հետապնդման կասեցման ինստիտուտը արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենսդրությունում 4. Քրեական հետապնդման կասեցման հիմքերի և պայմանների ընդհանուր բնութագիրը 5. Քրեական հետապնդման կասեցման հիմքերի կիրառման հիմնահարցերը	Հարցեր 1-5՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-5՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 2 Քրեական հետապնդման կասեցման և վերսկսման դատավարական կարգը **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական հետապնդման կասեցման դատավարական կարգի ընդհանուր բնութագիրը 2. Քննիչի գործողությունները քրեական հետապնդումը կասեցնելուց հետո 3. Կասեցված հետապնդման վերսկսման հիմքերը և դատավարական կարգը	Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 3 Քրեական հետապնդումը դադարեցնելու հիմնահարցերը **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական հետապնդումը դադարեցնելու հասկացությունը և նշանակությունը 2. Քրեական հետապնդումը դադարեցնելու ռեաբիլիտացնող և ոչ ռեաբիլիտացնող հիմքերը և դրանց կիրառման հիմնահարցերը 3. Անմեղության կանխավարկածը և ոչ ռեաբիլիտացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելը	Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, այնուհետև

	քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 4 Քրեական վարույթը կարճելու հիմնահարցերը **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական վարույթը կարճելու հասկացությունը և նշանակությունը 2. «Քրեական վարույթը կարճել» և «քրեական հետապնդումը դադարեցնել» հասկացությունների հարաբերակցությունը 3. Քրեական վարույթը կարճելու հիմքերը և դրանց կիրառման առանձնահատկությունները	Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 5 Քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթը կարճելու օրինականության և հիմնավորվածության ապահովման երաշխիքները **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական հետապնդումը կասեցնելու օրինականության և հիմնավորվածության նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը 2. Քրեական հետապնդումը կասեցնելու օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատական վերահսկողությունը 3. Քրեական վարույթը կարճելու օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատախազական հսկողությունը և գերատեսչական վերահսկողությունը 4. Քրեական վարույթը կարճելու օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատական վերահսկողությունը	Հարցեր 1-4՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-4՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Քրեական հետապնդման կասեցման և քրեական վարույթը կարճելու հիմնահարցերը» առարկայից դիֆերենցված ստուգարքի

1. Քրեական հետապնդման կասեցման ինստիտուտի պատմական ծագումն ու զարգացումը
2. Քրեական հետապնդման կասեցման հասկացությունը և նշանակությունը
3. Քրեական հետապնդման կասեցման ինստիտուտը արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենսդրությունում
4. Քրեական հետապնդման կասեցման հիմքերի և պայմանների ընդհանուր բնութագիրը
5. Քրեական հետապնդման կասեցման հիմքերի կիրառման հիմնահարցերը
6. Քրեական հետապնդման կասեցման դատավարական կարգի ընդհանուր բնութագիրը
7. Քննիչի գործողությունները քրեական հետապնդումը կասեցնելուց հետո
8. Կասեցված հետապնդման վերսկսման հիմքերը և դատավարական կարգը
9. Քրեական հետապնդումը դադարեցնելու հասկացությունը և նշանակությունը
10. Քրեական հետապնդումը դադարեցնելու ռեաբիլիտացնող և ոչ ռեաբիլիտացնող հիմքերը և դրանց կիրառման հիմնահարցերը
11. Անմեղության կանխավարկածը և ոչ ռեաբիլիտացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելը
12. Քրեական վարույթը կարճելու հասկացությունը և նշանակությունը
13. «Քրեական վարույթը կարճել» և «քրեական հետապնդումը դադարեցնել» հասկացությունների հարաբերակցությունը
14. Քրեական վարույթը կարճելու հիմքերը և դրանց կիրառման առանձնահատկությունները
15. Քրեական հետապնդումը կասեցնելու օրինականության և հիմնավորվածության նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը
16. Քրեական հետապնդումը կասեցնելու օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատական վերահսկողությունը
17. Քրեական վարույթը կարճելու օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատախազական հսկողությունը և գերատեսչական վերահսկողությունը
18. Քրեական վարույթը կարճելու օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատական վերահսկողությունը